

գրամ, եւ Նուրաինեան վ.ին իր գրքերն ու զգեստուց մէկ մասը: Գարձեալ ժառանգող եկեղեցին կը պարտաւորէր իրեն Տոգուոյն համար տարին քսան ձայնաւոր Պատարագ մատուցանել. իսկ մարմինը պիտի թաղուէր եկեղեցւոյն աջակողմեան դասը, շիրմի մը մէջ եւ վրան մարմարիոնէ կափարիչ մը պիտի դրուէր: Իր այս վերջին կամաց կտակակատար կարգեց եկեղեցւոյն նոյն ժամանակի վեց թաղականները: Եւ թէպէտ նոյն օրերը այս Թօսկանեան երկրին Գուքսն արգելած էր եկեղեցւոյ մէջ մեռեալ թաղելը, բայց Հայք աղերսագիր մը տալով հրաման առին՝ ըստ կտակին՝ Սարգիս Արքեպ.ը եկեղեցւոյ մէջ թաղելու: Որմէ ետեւ Սարգիս հրաման ըրաւ՝ որ գերեզմանը փորուի եւ կազմու պատրաստ կենայ:

Իտալերէն կտակին բնագիրը հաշիւներով հանդերձ կը պահուի այժմ Լիվոռնոյի հայ եկեղեցւոյ դիւանը: Ար դնեմ այստեղ սոյն կտակին օրինակը, զոր հաճեցաւ ղրկել ինձ ըստ խընդրանացս՝ Լիվոռնոյի եկեղեցւոյն այժմու Մեծաւորն Գերլ. Գր. Ծ. վ. Պահապանեան:

Copia del Testamento del fù Monsignor Sergio Arcivescovo di Cesarea in Cappadocia di Nazione Armena, Rogato dal Notaro D^o Antonio Del Testa del 30 Luglio 1773. —

Al Nome di Dio Amen. L'anno di nostro Signor Gesù Cristo Mille Settecento Settanta